



ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 21 ՓԵՏՐՈՒԻՐ, 2022

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՊՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւն վբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեա վիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ՍԱՂՄՈՍ 119


ՀՆԱԶԱՆԴՈՒԹԻՒՆ ԱՍՏՈՒԾՈՅ ՕՐԷՆՔԻՆ

Երիտասարդ մը ինչո՞վ կրնայ ինքզինք մաքուր պահել,
եթէ ոչ՝ քու խօսքերդ գործադրելով:
Ամբողջ սրտով կ'ուզեմ քեզի հնազանդիլ.
մի՛ ձգեր որ պատուէրներէդ խոսործիմ:
Խօսքդ սրտիս մէջ պահեցի,
որպէսզի չըլլայ որ քեզի դէմ մեղանչեմ:
Օրհնեալ ես դուն, Տէ՛ր,
սորվեցուր ինձի քու կանոններդ:
Շրթունքներս անդադար պիտի կրկնեն
բերնէդ դուրս եկած ամէն մէկ վճիռ:
Հաճոյք կ'առնեմ պատուիրաններդ կապարելէն,
բոլոր տեսակի հարստութիւններէն աւելի:
Հրահանգներդ են մտածումիս առանցքը,
ուսուցումներդ՝ ուշադրութեանս առարկան:
Կանոններդ են ինձի հաճոյք փոռողը,
եւ խօսքերդ բնաւ պիտի չմոռնամ:

ՇԱՐԱԿԱՆ- ԱՊՈԹՔ

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:
Ամենասուրբ Երրորդութիւն, տուր աշխարհիս խաղաղութիւն:
Եւ հիւանդաց բժշկութիւն, ննջեցելոց արքայութիւն:
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղելոց:
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:

*Պահապան ամենայնի Բրիստոս,
այ քո հովանի լիցի ի վերայ իմ ի փութ եւ ի գիշերի,
ի նստիլ ի փան, ի զնայ ի ճանապարհ,
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.
եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:*

ՕՐՈՒՔԱՆ ՆԻՒԹԸ

ԱՌԱԿԱՑ 24 ԳԼՈՒԽ

ԵՐԵՍՈՒՄ ԻՄԱՍՏՈՒՄ ԽՕՍՔԵՐ 24:11-22

Շարունակենք 24:11-22 համարները: 11-12 համարները պարտականության դիմաց կը դնէ իւրաքանչիւրը, մանաւանդ՝ երբ կը փեսնենք իրավիճակներ, որոնք կարիզը ունին օգնութեան, ազապագրութեան, որովհետեւ անարարեր ըլլալը ճիշդ չէ: Աւարտին, հաշուետւոյութեան օրը երբ գայ, սրբերը քննողը ու հոգին պաշտպանողը գիտէ, եւ իւրաքանչիւրին իր գործին չափովը պիտի հապուցանէ: Այսօր կ'ապրինք այնպիսի ժամանակահատուածի մը մէջ, ուր ունինք հետեւեալ ինծի ինչի փրամադրութիւնը, որուն դիմաց Առակաց գիրքը կը յիշեցնէ, որ անպայմանօրէն ընելիք մը ունինք, ազապելու եւ ազապելէն ետ չկենալու:

13-14 համարները համեմատականով մը կու գան ըսելու, թէ ինչպէս մեղր ու մեղրախորիսխը աղէկ ու քաղցր են, նոյնպէս ալ աստուածային իմաստութեան ճանաչումը նոյնքան եւ աւելի հոգիի քաղցրութիւն կը պարճառէ, երբ գրնես, վարահ եղիր որ վախճանին յոյսդ պիտի չկորէ:

15-16 համարները զգուշացում եւ ազդարարութիւն են չարին, որ չըլլայ արդարին վնաս հասցնէ, որովհետեւ արդարը եօթն անգամ ալ իյնայ դարձեալ պիտի կանգնի, այս բաժինն ալ յոյսու փայ արդարին, որ նոյնիսկ եթէ իյնայ, Աստուած դարձեալ պիտի կանգնեցնէ զինք: Իսկ 17-18 համարները, արդարին յիշեցում է, որ չըլլայ ուրախանայ կամ ցնծայ այս անգամ թշնամիին իյնալէն, որովհետեւ արդարը կոչուած է ոչ թէ ուրախանալու կամ ցնծալու, այլ ընդհակառակը թշնամիին համար աղօթելու, ինչպէս պիտի ըսէր Քրիստոս. «Աղօթէ թշնամիիդ համար», բայց այդ մէկը ընելու համար պարզ ու դիւրին չէ, այլ կը պահանջէ հոգիի այնպիսի զօրութիւն, որ կարելի ըլլայ աղօթելու» Միւս կողմէ, հապուածու կը յիշեցնէ, որ եթէ Տէրը փեսնէ եւ իրեն համար հաճելի չի թուիր, այս անգամ բարկութիւնը անոր վրայ դարձնէ:

19-20 համարները անգամ մը եւս կ'ըսէ. «Չարագործներուն համար սիրտդ մի նեղեր, ու ամբարիշտներուն մի նախանձիր: Որովհետեւ չար մարդուն վախճանը չար է, ու ամբարիշտներուն ճրագը, լոյսը պիտի մարի» խօսքը աւարտի մասին է, կեանքի վախճանին: Որովհետեւ անոնք կրնայ ըլլալ որ երկրի վրայ յաջողութիւն գրնեն, ինչպէս նախորդող հապուածին մէջ կը յիշեցնէր, որ չնախանձիս, բայց այդ յաջողութիւնը ժամանակաւոր է ու գնայուն, աւարտը, սակայն, կու գայ յիշեցնելու որ անոնք բարի աւարտ պիտի չունենան, եւ իրենց լոյսը պիտի մարի:

Ի վերջոյ, մեր այսօրուան վերջին հապուածը 21-22 համարները, ինչպէս նախապէս, հոս եւս կը յիշեցնէ այն մտերմիկ պահը հօր եւ զակի, Որդիակ իմ, արտայայտութեամբ, եւ կ'ըսէ. «Տիրոջմէն ու թագաւորէն վախցիր, եւ փոփոխական մարդոց հիտ մի խառնուիր»: Ամբողջ Առակաց գիրքին նպատակն է կամ թելադրութիւնը Տիրոջ երկիւտը ունենալու: Երկիւտ կամ վախ, չի նշանակեր ահ ու սարսափ, այլ ակնածանք, մեծարանք, պարիստարկութիւն Մարտիոյ, որովհետեւ Իրեն կը վայելէ, այնպէս ինչպէս թագաւորի պարագային, երբ փութեալ երկրի բնակիչները յարուկ յարգանք ու մեծարանք կը փաժեն, կը ցուցաբերեն անոր նկատմամբ, այդպէս ալ Մարտիոյ: Նաեւ կը յիշեցնէ, որ փոփոխական մարդոց հետ չխառնուելու, փոփոխական մարդը այն մարդն է, որ կրնայ խառնակութիւն յառաջ բերել, եւ այդպիսին լաւ չնկատուիր թագաւորին կողմէ, առաւել եւս Մարտիոյ աչքին: Եւ ահա այդպիսիներուն կործանումը յանկարծ փեղի պիտի ունենայ, եւ ով գիտէ Տիրոջ եւ թագաւորին բերելիք պարտուհար: Ոչ որ: Ուստի եկէք ապրինք այնպիսի ձեռով որ մեր կեանքերուն մէջ Տիրոջ ու թագաւորին երկիւտը ըլլայ, որպէսզի յանկարծ մեր կործանումը անակնկալ չըլլայ: Մանաւանդ՝ երբ աւարտին պիտի կանգնինք ուզենք կամ ոչ Մարտիոյ արդար դարաստանին դիմաց: